Ձոյ, երագաբար ծառին վրայ սահելով, զգուշութեամբ խարիսխը հաստատեց. տղադորը իր բոցարծարծը վառ թողուց որ օդապարկին չափ մը վերելական ուժ պահէ, և կարող ըլլայ զայն օդոյ մէջ բռնելու։ Հովը գրեթէ յանկարծակի դադրած էր։

— Հիմա, ըսաւ Ֆէրկըսըն, երկու հրացան առ, բարեկամ Տիք, մէկը քեզի համար միւսը Ճոյին, և ջանացէք երկուքդ ալ մէկտեղ վրթի մը աղէկ կտորը բերելու, որ մեզի ճաշի ծառայէ։

— Որսի, հապա որսի երթանք, կանչեց Քէնիրտի։

Սանդղով նաւակէն վար ինջաւ, մինչ դեռ Ճոյ ճիւղէ ճիւղ ցատքելով՝ վար հասած անոր կը սպասէր անդամները ձգտեցընելով։ Տղադորը, իր երկու ընկերաց ծանրութենէն թեթեւցած, բոցարծարծը բոլորովին մարեց։

— Զըլլայ թէ թռչիս երթաս, տէրս, կանչեց Ճոյ։

— Հանգիստ եղիր տղայս. ամուր մը հաստատուած կեցած եմ։ Նշանած տեղեկութիւններս կարգի կ'ուզեմ դնել. աղէկ որսորդութիւն ըրէք և խոհեմաբար շարժեցէք։ Միւս կողմանէ ես այս տեղէս չորս կողմը դիտեմ պիտի, և պզտի կասկածելի բան մը որ տեսնեմ՝ քարապինայի հարուած մը կ'արձրկեմ, այդ նշան ըլլայ ժողվուելու։

— Շատ աղէկ է, պատասխանեց որսորդը։

Կը շարունակուի։

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Տես երես 253)

ՏԵՍԱՐԱՆ Զ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ, ապա ԱՆՏՈՆԻՈՍ

ՈՄՆ. Ահաւասիկ Անտոնիոս դիմեալ գայ։
ԱՑԼՔ. Զինչ ունիցի ասել առ մեզ։
ՈՄՆ. Տեսէք, զիարդ հեծէ և լայ։
ՈՄՆ. Սիրէր նա յոյժ զԿեսար։
ԱՆՏ. (Մատանի ապիպակ Բաւէինակաս) Այո, իմն Հռովմայեցիք, խոստովանիմ և ես, սիրէի զնա. և թէ էր հնար և զկեանս իմ տայի փոխանակ նորա. այլ, աւաղ, թերևս այլ ընդ այլոյ ինչ խորհիցիք դուք 'ի վերայ նորա. այն ինչ նա զպատակս արքունի ընկեցեալ 'ի գլխոյն մատոյց զանձն զոհ ինքնանուէր օրինաց Հռովմայ, ով որ ոչ անչքնչանայր փոխանակ նորա։ Այլ ինձ չեն կամք հրաշացուցանել զյիշատակ նորա. թող խօսեցին սրեալերք, գոչեսցեն զհանդէս դիւցազին. միայն ողորմեցարուք արտասուացս, ներեցէք բնութեան, ներեցէք բարեկամութեան, գութ արկցեն 'ի ձեզ արտասուքս որ յաչացս ցօղին։
ՈՄՆ. Արտասուել պարտ էր քեզ զգերութիւն Հռովմայ. դիւցազուն էր այրն, սակայն բռնաւոր էր։
ԱՑԼ ՈՄՆ. Բռնաւոր էր մոլին այն, կորիցէ յիշատակ նորա. կեցցեն ազատարարք Հռովմայ։
ԺՈՂ. Կեցցէ Բրուտոս, կեցցէ Կասսիոս։
ԱՆՏ. Ինձ քաւ լիցի պարտաւորել զնոսա. նոքա հայրենեացս խնդրեն պաշտպանել. նոքա սպանին զձեր իշխանապետ. 'ի վերայ ամենայն բարերարութեանց նորա շաղախեցան տարապարտ յարիւն նորա. այլ զինչ ինաս ահագին վրիժուցս. եթէ չարագործ ոք էր Կեսար և կամ մահապարտ, այնպէս իցէ. սակայն զի արդեօք գործեաց ձեզ երբեք սա այս չարագործ. աղէ ասացէք. եթէ ծանրացաւ ինչ ձեզ անողորմ ձեռամբ, եթէ զարգասիս իւրոց մրցանաց միայն վայելեաց. ահ, յաւարէ աշխարհի նա զձեր ճնակատս պսակեաց. ձեր է ամենայն ոսկի և գանձ աշխարհաց. նաև զարիւն իւր վասն ձեր հեղոյր 'ի սէր հայրենեաց։ Նա յիւրոց անտի յաղթական կառաց զիւրոց քաղաքացւոց սիրան տեսանէր, ինչեալ 'ի խոնարհ առատ պարգևօք իւրով իսկ ձեռամբ զձերոց աչաց զարտօսրն ջնջէր։ Նովաւ դուք յաղթանակեցէք աշխարհի, նովաւ զօրացայք, նովաւ երջանկացայք. նա միոյ միոյ լեռաբաշխ աջով կարկառէր առ ձեզ փոխարէն զտրիտուր ծառայութեան, և ներէր գրով յանցուածոց իւրում ժողովրդեան. զձեզ արդ, ո՛ անմահ աստուածք, զքեզ ունիմ բանիցս վկայ, լուսարփի եթեր, որոց նա յերկրի 'ի մէջ մահացուաց գծեցաւ պատկեր. դուք իսկ ինքնին գիտէք, եթէ զիարդ մարդասէր գթած էր Կեսար, որում և հաւատայիք զբոլոր աշխարհ։
ԺՈՂ. Այդպէս է հաւաստի, բազմագութ էր Կեսար։
ԱՆՏ. Ահ, եթէ դիւցազն այն առեալ էր երբեք զվրէժինդրութեան սուսեր, արդ կենդանի կայր, և ոչ ոք այժմիկ յիւրոց ըղձանաց 'ի դերև մնայր. զի առատ էր նա և առ թշնամիս անգամ 'ի տուրս բարեաց. երկիցս Կասսիոսի զկեանսն շնորհեաց. և Բրուտոս, ահ, բաբէ անհնարին չարեացս, ո՛ անլուր աղէտ. աւաղ, ոչ ևս հանդարտեմ, ով քաջք, բռնացան 'ի վերայ իմ ցաւք. ահ, Բրուտոս գլուխ մարդադաւաց, անօրէնն այն Բրուտոս, բարբարոսն այն Ճիւաղ ահարկու, էր նորա որդին։
ԺՈՂ. Ո՛վ դէք...
ԱՆՏ. Գիտեմ, ով քաջք, գիտեմ զի սօսափիւն գնայ ընդ ոսկերս ձեր, սիրտք ձեր ոչ ևս հան-

գուրժէն, տեսանեմ և զարտասուսն որ ընդ ծնօտս ձեր վիժեալ իջանեն։ Բրուտոս նորա է որդի. այլ զի՞նչ. միթէ ոչ և դուք որդի նորա իցէք, իմ Հռովմայեցիք. նա զձեզ որդեգրեաց յիւրումն սրտի. յանկա՛րծ, եթէ գիտէիք զկամս նորա։

ԺՈՂ. Զի՞նչ իցէ։

ԱՆՏ. Հռովմ ժառանգ է նորա, ձեր են կանձք նորա. Կեսար և յետ մահու ձեր է հովանի 'ի գլխն աղի. զձեզ միայն սիրէր նա. վասն ձեր միայն գնայր նա արդ յԱսիա. գնայր վասն ձեր ընդ քիրտն գալ և ընդ ապաժոյժ 'ի փառս Հռովմայ, իմ Հռովմայեցիք. ասէր նա և զայս ձեզ գրէր իւր կտակ վերջին. ո՛ Հռովմայեցիք, ժողովուրդ թագաւոր, որում ես ծառայ եմ. թող թագաւորեսցէ Կեսար 'ի վերայ աշխարհի, զի և 'ի վերայ Կեսարու թագաւորեսցէ Հռովմ։ Եթէ այսչափ ինչ արասցէ՞ն ընդ ձեզ Բրուտոս և Կասսիոս։

ԺՈՂ. Ա՜հ, ցաւ է մեզ և տագնապ անհնարին։

ԱՑԼՔ. Արդարև Կեսար հայր էր Հռովմայ։

ԱՆՏ. Այլ հայրն ձեր ոչ ևս կայ 'ի միջի. անարի դաւով յափշտակեցաւ դիւցազն 'ի միջոյ, պարծանքն բնութեան, աշխարհի և Հռովմայ։ Ա՜հ, միթէ զլացջի՞ք դուք թերևս հօրն ձերում զպատիւ մահուն. եթէ ոչ աչք ձեր ցօղեսցեն արտասուս և ձեռք ձեր 'ի տապան առեալ հանգուսցեն զհայրն ձեր և զսիրելի բարեկամն։ Ահաւասիկ է նա առաջի աչաց ձերոց յարիւն թաթաւեալ. (առնէալ յգէ զդի Կեսարու)։

ԺՈՂ. Ո՜ ողորմ կերպարան, ո՛ արտասուաց պատկեր։

ԱՆՏ. Ահաւասիկ են աճիւնացեալ նշխարք մեծութեան Հռովմայ. մանաւանդ թէ և աշխարհի. ահաւասիկ աստուածն վրէժխնդիր՝ զոր պաշտէիքն, և որում երկրպագէին նոքին իսկ սպանողք դորա. սա է պարծանքն ձեր, հզօր ապաւէն անխափ ապաստան մարտի, և խաղաղութեան ձեր ամուր վահան, որ երբեմն սարսեալ դողացոյց զաշխարհս ամենայն. որ և հանդերձեալ իսկ էր զգոռոզն Բաբելոն գերելոց փաղանգ՝ շղթայակապ ածել ձգել զհետ կառաց իւրոց աստ 'ի մեր քաղաք։ Ճանաչէ՞ք արդեօք, ո՛ Հռովմայեցիք, զձեռն Կեսար, աղէ հայեցարուք ընդ նա, շօշափեցէք և տեսէք զվէրս նորա. տեսէք զարիւնն, զոր արդ իսկ առաջի աչաց ձերոց հեղին տարապարտ ձեռքն տիրադրուժ. աստ եհար զնա Կիմբրոս, աստ Դեկիմոս և Կասսիոս մխեցին սռէպ զերկաթն արիւնախանձ. և ահա. 'ի մարմնի աստ մեծի Կեսարու. աստ և Բրուտոս, անօրէնն Բրուտոս յանպարտ արիւն ծնողին իւրոյ զձեռն շաղախեաց, և գաղտնաբար 'ի սիրտն մխեաց. իսկ Կեսար զի՞նչ. հայեցեալ ընդ նա քաղցր ակամբ այն ինչ գիտապաստ արիւնոտ յերկիր թաւալէր, 'ի ներել փութայր, և որդի սիրելի զնա անձայնէր. հաւատացէք ինձ, ո՛ Հռովմայեցիք, ես աստ մօտ կայի զօղեալ յետ կուսէ լսել զամենայն. զայս միայն նա բարբառ արձակէր 'ի մահուն իւրում. Ա՜հ, որդեակ իմ, որդեակ իմ, գոչէր, և գո՞ւ ես, ո՜վ իմ Բրուտէ։

ՈՄՆ. Ա՜յ նենգող դաւաճան, արժանի շանթընկէց հրոյն Արամազդայ։

ԱՑԼՔ. Բա՜րէ, արիւն նորա կայլակէ դեռ ևս։

ԱՆՏ. Արիւնս այս վրէժխնդրութիւն 'ի ձէնջ պաղատի, և յարիական բազկաց այտի այդմ ակն ունի։ Լուարուք լուարուք, ո՛ Հռովմայեցիք. զարթիք և լուարուք զբարբառ նորա, որ ինևս ընդ ձեզ խօսի. եկայք ընդ իս փութեսցուք տագնապաւ 'ի վերայ մոլեգին սպանողաց դորա, զայս միայն սփոփանս հայցեմ շնորհել հոգւոյն Կեսարու. ղամբար 'ի ձեռս առեալ 'ի հրոյ անտի, ուր մարմին նորա այրել պատրաստի. դիմեսցուք առ հասարակ շտապ տագնապաւ, հուր հարեալ բորբոքեսցուք քանդեսցուք զխշտիս մարդակոտոր գազանացն. անխնայ սուր 'ի կոյս արկցուք ամբարշտացն. փեռեկեսցուք հանցուք կորզեսցուք 'ի բաց զսիրտս նոցա, գէշ արկցուք գազանաց երկրի, զոհ դիցուք հասարակաց հօրս նենգադաւ աստուածոցն մերոյ հայրենեաց. հա՛պա, երթիցուք, ընկերք իմ, երթիցուք. ձեզ զԱնտոնիոս առէք առաջնորդ։

ՈՄՆ. Հապա, երթիցուք, հանցուք ընդ կառափն նոցա զքէն վրիժուն։

ԱՑԼ ՈՄՆ. Երդուեալ յանպարտ արիւն դիւցազին, արագարագ թափեսցուք զվրէժ նորա. հա՛պա, 'ի զէն ընթացէք։

ԺՈՂ. Մա՜հ, սատակումն, վրէժխնդրութի՜ւն։

ԱՆՏ. Մի՛ չէջցին, ո՛վ քաջք, բոցք բարկութեան. Ճեպեսցուք գրոհ տալ ամբոխին, շարժեսցուք զնոսա 'ի պատերազմ, իմաստութեամբ արագ արագ խնդրեսցուք զվրէժ արեան Կեսարու, և յարուսցուք զնա 'ի նորին յաջորդ։

ՎԵՐՋ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Սրունքի մը կայծակնահար անդամահատութիւնը։ — Ֆլօր Բրիխոթքոֆ անուամբ 12 տարեկան ռուս գեղացի տղայ մը՝ 5 տարեկան եղած ատենը ծունկին վրայ իյնալով աջ սրունքին վրայ վէրք մ'ունեցեր էր. և որովհետև անկողին ինկած ժամանակը սրունքը քաշուած կծկած կը բանէր, առողջանալէն ետքն ալ անկարելի եղաւ նորէն շտկելը, և հարկադրեցաւ քալելու համար նեցուկ գործածել։ Ամառը (1867ին) սաստիկ տաք օդով մը Ֆլօր իր քեռոյն հետ ձի հեծած իրենց արտերուն այցելութեան կ'երթային. յանկարծ մրրիկ մ'ելաւ, 'ի սկզբան թեթև որոտումներով և քիչ վերջը սաստիկ գոռում մը գուաց. ձիերը զարհուրած խրտեցան, Ֆլօր ձիէն վար ինկաւ և մարեցաւ. երբ խելքը վրան եկաւ՝ տեսաւ